բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը:

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմանագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ _____ (_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության __2__ օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից __7__ օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6.6 Ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ Վաճառողը Գնորդին է տրամադրում նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը²⁰:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

²⁰ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե չի մատակարարվում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով²¹:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 30.12.2015թ.:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.6 Եթե Պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) Պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում²²:

²¹ Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհարկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:

²² Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

9.7 Եթե Պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները²³:

9.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.12 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

«Շիրակ-ջրմուկայություն» ՓԲԸ

Ք.Գյումրի Դուդկո 1

<<Առեքսիմբանկ>> Գազպրոմբանկի խումբ

Հ/Հ2380020526250100

ՀՎՀՀ 05531223

Գլխավոր տնօրենի տեղակալ՝

_____Վ.Մարտիրոսյան

ստորագրություն

ՎԱՃԱՌՈՂ

«»

Տնօրեն՝
(ստորագրություն)
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

²³ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համարեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ ԶԵՌՔԲԵՐՄԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Զ/ն	Անվանում	Չափ. միավ.	Քանակ	Տեխնիկական բնութագիր
1	Պողպատե խողովակ DN15	գծ.մ	60	Ջրի համար, պատի հաստությունը h=2.5-3 մմ, չքայքայվող դիմացկուն պողպատից, ռուսական արտադրության կամ համարժեք, ԳՕՍՍ 3262-75 <<Ջրի պողպատե խողովակներ, Տեխնիկական պայմաններ>>
2	Պողպատե խողովակ DN20	գծ.մ	60	Ջրի համար, պատի հաստությունը h=2.5-3 մմ, չքայքայվող դիմացկուն պողպատից, ռուսական արտադրության կամ համարժեք, ԳՕՍՍ 3262-75 <<Ջրի պողպատե խողովակներ, Տեխնիկական պայմաններ>>
3	Պողպատե խողովակ DN32	գծ.մ	60	Ջրի համար, պատի հաստությունը h=2.5-4 մմ , չքայքայվող դիմացկուն պողպատից, ռուսական արտադրության կամ համարժեք, ԳՕՍՍ 3262-75 <<Ջրի պողպատե խողովակներ, Տեխնիկական պայմաններ>>
4	Պողպատե խողովակ DN40	գծ.մ	60	Ջրի համար, պատի հաստությունը h=3-4.5 մմ, չքայքայվող դիմացկուն պողպատից, ռուսական արտադրության կամ համարժեք, ԳՕՍՍ 3262-75 <<Ջրի պողպատե խողովակներ, Տեխնիկական պայմաններ>>
5	Պողպատե խողովակ DN50	գծ.մ	60	Ջրի համար, պատի հաստությունը h=3-4.5 մմ, չքայքայվող դիմացկուն պողպատից, ռուսական արտադրության կամ համարժեք, ԳՕՍՍ 3262-75 <<Ջրի պողպատե խողովակներ, Տեխնիկական պայմաններ>>
6	Պողպատե խողովակ DN57	գծ.մ	20	Ջրի համար, պատի հաստությունը h=3-4.5 մմ, չքայքայվող դիմացկուն պողպատից, ռուսական արտադրության կամ համարժեք, ԳՕՍՍ 3262-75 <<Ջրի պողպատե խողովակներ, Տեխնիկական պայմաններ>>
7	Պողպատե խողովակ DN80	գծ.մ	10	Ջրի համար, պատի հաստությունը h=3-4.5 մմ, չքայքայվող դիմացկուն պողպատից, ռուսական արտադրության կամ համարժեք, ԳՕՍՍ 3262-75 <<Ջրի պողպատե խողովակներ, Տեխնիկական պայմաններ>>
8	Պողպատե խողովակ DN87	գծ.մ	10	Ջրի համար, պատի հաստությունը h=3-4.5 մմ, չքայքայվող դիմացկուն պողպատից, ռուսական արտադրության կամ համարժեք, ԳՕՍՍ 3262-75 <<Ջրի պողպատե խողովակներ, Տեխնիկական պայմաններ>>

9	Պողպատե խողովակDN125	գծ.մ	100	Ջրի համար, պատի հաստությունը h=3-5 մմ, չքայքայվող դիմացկուն պողպատից, ռուսական արտադրության կամ համարժեք, ԳՕՍՍ 3262-75 <<Ջրի պողպատե խողովակներ, Տեխնիկական պայմաններ>>
10	Պողպատե խողովակDN150	գծ.մ	100	Ջրի համար, պատի հաստությունը h=3-5 մմ, չքայքայվող դիմացկուն պողպատից, ռուսական արտադրության կամ համարժեք, ԳՕՍՍ 3262-75 <<Ջրի պողպատե խողովակներ, Տեխնիկական պայմաններ>>
11	Պողպատե խողովակDN200	գծ.մ	100	Ջրի համար, պատի հաստությունը h=3-5 մմ, չքայքայվող դիմացկուն պողպատից, ռուսական արտադրության կամ համարժեք, ԳՕՍՍ 3262-75 <<Ջրի պողպատե խողովակներ, Տեխնիկական պայմաններ>>
12	Պողպատե խողովակDN250	գծ.մ	100	Ջրի համար, պատի հաստությունը h=3-5 մմ, չքայքայվող դիմացկուն պողպատից, ռուսական արտադրության կամ համարժեք, ԳՕՍՍ 3262-75 <<Ջրի պողպատե խողովակներ, Տեխնիկական պայմաններ>>
13	Պողպատե խողովակDN350	գծ.մ	50	Ջրի համար, պատի հաստությունը h=3-6 մմ, չքայքայվող դիմացկուն պողպատից, ռուսական արտադրության կամ համարժեք, ԳՕՍՍ 3262-75 <<Ջրի պողպատե խողովակներ, Տեխնիկական պայմաններ>>
14	Պողպատե խողովակDN400	գծ.մ	50	Ջրի համար, պատի հաստությունը h=5-8մմ, չքայքայվող դիմացկուն պողպատից, ռուսական արտադրության կամ համարժեք, ԳՕՍՍ 3262-75 <<Ջրի պողպատե խողովակներ, Տեխնիկական պայմաններ>>
15	Պողպատե խողովակ քառանկյուն հատումով DN20*20 *2	գծ.մ	40	Պողպատե խողովակ քառանկյուն հատումով DN20*20, h=2մմ
16	Պողպատե խողովակ քառանկյուն հատումով DN30*10*2	գծ.մ	40	Պողպատե խողովակ քառանկյուն հատումով DN30*10, h=2 մմ
17	Պողպատե խողովակ քառանկյուն հատումով DN20*30*2	գծ.մ	40	Պողպատե խողովակ քառանկյուն հատումով DN20*30, h=2մմ
18	Պողպատե խողովակ քառանկյուն հատումով DN15-15	գծ.մ	60	Պողպատե խողովակ քառանկյուն հատումով DN15-15, h=2մմ
19	Պողպատե խողովակ քառանկյուն հատումով DN40-40	գծ.մ	50	Պողպատե խողովակ քառանկյուն հատումով DN40-40, h=2մմ
20	Պղնձե խողովակDN8	գծ.մ	10	Պղնձե խողովակ DN 8, h=1մմ
21	Պոլիէթիլենային խողովակ DN 20	գծ.մ	1,000	Խմելու ջրի համար DN=20, 10 մթն ճ., ջրամատակարարման ճնշումային խողովակները նախատեսված են ջրմուղների համար, որոնք ջուր են տեղափոխում, և որոնց նկատմամբ պոլիէթիլենը քիմիկապես կայուն է և համապատասխանում է ԳՕՏ 18599-2001 պահանջներին: Խողովակները բաց են թողնվում կապոցներով: Խողովակների ողջ երկայքնով երկու կապույտ գծեր են քաշված: Ինչպես

				նան խողովակի վրա նշված է պոլիէթիլենի տեսակը, տրամագիծը, պատի հաստությունը, ճնշումը և SDR-ն: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված, Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասե արտադրանքների տեխնիկական կանոնակարգի:
22	Պոլիէթիլենային խողովակ DN 25	գծ.մ	1,000	Խմելու ջրի համար DN=25, 10 մթն ճ., ջրամատակարարման ճնշումային խողովակները նախատեսված են ջրմուղների համար, որոնք ջուր են տեղափոխում, և որոնց նկատմամբ պոլիէթիլենը քիմիկապես կայուն է և համապատասխանում է GOCT 18599-2001 պահանջներին: Խողովակները բաց են թողնվում կապոցներով: Խողովակների ողջ երկայքնով երկու կապույտ գծեր են քաշված: Ինչպես նաև խողովակի վրա նշված է պոլիէթիլենի տեսակը, տրամագիծը, պատի հաստությունը, ճնշումը և SDR-ն: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված, Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասե արտադրանքների տեխնիկական կանոնակարգի:
23	Պոլիէթիլենային խողովակ DN 32	գծ.մ	1100	Խմելու ջրի համար DN=32, 10 մթն ճ., ջրամատակարարման ճնշումային խողովակները նախատեսված են ջրմուղների համար, որոնք ջուր են տեղափոխում, և որոնց նկատմամբ պոլիէթիլենը քիմիկապես կայուն է և համապատասխանում է GOCT 18599-2001 պահանջներին: Խողովակները բաց են թողնվում կապոցներով: Խողովակների ողջ երկայքնով երկու կապույտ գծեր են քաշված: Ինչպես նաև խողովակի վրա նշված է պոլիէթիլենի տեսակը, տրամագիծը, պատի հաստությունը, ճնշումը և SDR-ն: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված, Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասե արտադրանքների տեխնիկական կանոնակարգի:
24	Պոլիէթիլենային խողովակ DN40	գծ.մ	1800	Խմելու ջրի համար DN=40, 10 մթն ճ., ջրամատակարարման ճնշումային խողովակները նախատեսված են ջրմուղների համար, որոնք ջուր են տեղափոխում, և որոնց նկատմամբ պոլիէթիլենը քիմիկապես կայուն է և համապատասխանում է GOCT 18599-2001 պահանջներին: Խողովակները բաց են թողնվում կապոցներով: Խողովակների ողջ երկայքնով երկու կապույտ գծեր են քաշված: Ինչպես նաև խողովակի վրա նշված է պոլիէթիլենի տեսակը, տրամագիծը, պատի հաստությունը, ճնշումը և SDR-ն: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված, Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասե արտադրանքների տեխնիկական կանոնակարգի:

25	Պոլիէթիլենային խողովակ DN50	գծ.մ	2000	Խմելու ջրի համար DN=50, 10 մթն ճ., ջրամատակարարման ճնշումային խողովակները նախատեսված են ջրմուղների համար, որոնք ջուր են տեղափոխում, և որոնց նկատմամբ պոլիէթիլենը քիմիկապես կայուն է և համապատասխանում է ГОСТ 18599-2001 պահանջներին: Խողովակները բաց են թողնվում կապոցներով: Խողովակների ողջ երկայքնով երկու կապույտ գծեր են քաշված: Բնչպես նաև խողովակի վրա նշված է պոլիէթիլենի տեսակը, տրամագիծը, պատի հաստությունը, ճնշումը և SDR-ն: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված, Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասե արտադրանքների տեխնիկական կանոնակարգի:
26	Պոլիէթիլենային խողովակ DN63	գծ.մ	1310	Խմելու ջրի համար DN=63, 10 մթն ճ., ջրամատակարարման ճնշումային խողովակները նախատեսված են ջրմուղների համար, որոնք ջուր են տեղափոխում, և որոնց նկատմամբ պոլիէթիլենը քիմիկապես կայուն է և համապատասխանում է ГОСТ 18599-2001 պահանջներին: Խողովակները բաց են թողնվում կապոցներով: Խողովակների ողջ երկայքնով երկու կապույտ գծեր են քաշված: Բնչպես նաև խողովակի վրա նշված է պոլիէթիլենի տեսակը, տրամագիծը, պատի հաստությունը, ճնշումը և SDR-ն: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված, Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասե արտադրանքների տեխնիկական կանոնակարգի:
27	Պոլիէթիլենային խողովակ DN75	գծ.մ	1500	Խմելու ջրի համար DN=75, 10 մթն ճ., ջրամատակարարման ճնշումային խողովակները նախատեսված են ջրմուղների համար, որոնք ջուր են տեղափոխում, և որոնց նկատմամբ պոլիէթիլենը քիմիկապես կայուն է և համապատասխանում է ГОСТ 18599-2001 պահանջներին: Խողովակները բաց են թողնվում կապոցներով: Խողովակների ողջ երկայքնով երկու կապույտ գծեր են քաշված: Բնչպես նաև խողովակի վրա նշված է պոլիէթիլենի տեսակը, տրամագիծը, պատի հաստությունը, ճնշումը և SDR-ն: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված, Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասե արտադրանքների տեխնիկական կանոնակարգի:
28	Պոլիէթիլենային խողովակ DN90	գծ.մ	500	Խմելու ջրի համար DN=90, 10 մթն ճ., ջրամատակարարման ճնշումային խողովակները նախատեսված են ջրմուղների համար, որոնք ջուր են տեղափոխում, և որոնց նկատմամբ պոլիէթիլենը քիմիկապես կայուն է և համապատասխանում է ГОСТ 18599-2001 պահանջներին: Խողովակները բաց են թողնվում կապոցներով: Խողովակների ողջ երկայքնով երկու կապույտ գծեր են քաշված: Բնչպես նաև խողովակի վրա նշված է պոլիէթիլենի տեսակը, տրամագիծը, պատի հաստությունը, ճնշումը և SDR-ն: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված, Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասե արտադրանքների տեխնիկական կանոնակարգի:

29	Պոլիէթիլենային խողովակ DN110	գծ.մ	500	Խմելու ջրի համար DN=110, 10 մթն ճ., ջրամատակարարման ճնշումային խողովակները նախատեսված են ջրմուղների համար, որոնք ջուր են տեղափոխում, և որոնց նկատմամբ պոլիէթիլենը քիմիկապես կայուն է և համապատասխանում է GOST 18599-2001 պահանջներին: Խողովակները բաց են թողնվում կապոցներով: Խողովակների ողջ երկայքնով երկու կապույտ գծեր են քաշված: Բնչպես նաև խողովակի վրա նշված է պոլիէթիլենի տեսակը, տրամագիծը, պատի հաստությունը, ճնշումը և SDR-ն: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված, Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասե արտադրանքների տեխնիկական կանոնակարգի:
30	Պոլիէթիլենային խողովակ DN160	գծ.մ	200	Խմելու ջրի համար DN=160, 10-15 մթն ճ., ջրամատակարարման ճնշումային խողովակները նախատեսված են ջրմուղների համար, որոնք ջուր են տեղափոխում, և որոնց նկատմամբ պոլիէթիլենը քիմիկապես կայուն է և համապատասխանում է GOST 18599-2001 պահանջներին: Խողովակների երկարությունը՝ 6-ից 12 մետր: Խողովակների ողջ երկայքնով երկու կապույտ գծեր են քաշված: Բնչպես նաև խողովակի վրա նշված է պոլիէթիլենի տեսակը, տրամագիծը, պատի հաստությունը, ճնշումը և SDR-ն: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված, Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասե արտադրանքների տեխնիկական կանոնակարգի:
31	Երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակ DN 110	գծ.մ	100	Կոյուղու ճնշումային խողովակները նախատեսված են ջրմուղների համար, որոնք կոյուղաջուր և այլ հեղուկներ են տեղափոխում, և որոնց նկատմամբ պոլիէթիլենը քիմիկապես կայուն է և համապատասխանում է GOST 18599-2001 պահանջներին: DN=110մ տրամագծով, պատի հաստությունը h=4մմ, լինի ամուր և չճքվող, GOST 22689.1-89
32	Երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակ DN 150	գծ.մ	100	Կոյուղու ճնշումային խողովակները նախատեսված են ջրմուղների համար, որոնք կոյուղաջուր և այլ հեղուկներ են տեղափոխում, և որոնց նկատմամբ պոլիէթիլենը քիմիկապես կայուն է և համապատասխանում է GOST 18599-2001 պահանջներին: DN=150մ տրամագծով, պատի հաստությունը h=4մմ, լինի ամուր և չճքվող GOST 22689.1-89
33	Երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակ DN 200	գծ.մ	250	Կոյուղու ճնշումային խողովակները նախատեսված են ջրմուղների համար, որոնք կոյուղաջուր և այլ հեղուկներ են տեղափոխում, և որոնց նկատմամբ պոլիէթիլենը քիմիկապես կայուն է և համապատասխանում է GOST 18599-2001 պահանջներին: DN=200մ տրամագծով, պատի հաստությունը 6մմ, լինի ամուր և չճքվող, GOST 22689.1-89

34	Երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակ DN 300	զծ.մ	300	Կոյուղու ճնշումային խողովակները նախատեսված են ջրմուղների համար, որոնք կոյուղաջուր և այլ հեղուկներ են տեղափոխում, և որոնց նկատմամբ պոլիէթիլենը քիմիկապես կայուն է և համապատասխանում է ГОСТ 18599-2001 պահանջներին: DN=300 մմ տրամագծով, պատի հաստությունը h=8-10 մմ, լինի ամուր և չճքվող, ГОСТ 22689.1-89
35	Երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակ DN 400	զծ.մ	200	Կոյուղու ճնշումային խողովակները նախատեսված են ջրմուղների համար, որոնք կոյուղաջուր և այլ հեղուկներ են տեղափոխում, և որոնց նկատմամբ պոլիէթիլենը քիմիկապես կայուն է և համապատասխանում է ГОСТ 18599-2001 պահանջներին: DN=400 մմ տրամագծով, պատի հաստությունը h=8-10 մմ, լինի ամուր և չճքվող, ГОСТ 22689.1-89
36	Երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակ DN 500	զծ.մ	50	Կոյուղու ճնշումային խողովակները նախատեսված են ջրմուղների համար, որոնք կոյուղաջուր և այլ հեղուկներ են տեղափոխում, և որոնց նկատմամբ պոլիէթիլենը քիմիկապես կայուն է և համապատասխանում է ГОСТ 18599-2001 պահանջներին: DN=500 մմ տրամագծով, պատի հաստությունը h=8-10 մմ, լինի ամուր և չճքվող, ГОСТ 22689.1-89
37	Պոլիէթիլենային միացում DN20-20 պարուրակային /ամբողջական՝ էգ և որձ կցորդիչներով	հատ	200	Պոլիէթիլենային էգ և որձ կցորդիչներ /առանձնացող էգ և որձ մասերով/ DN20 պարուրակային, PN=10 մթն. /10 բար/, Համապատասխանի ՀՀ Կառավարության որոշմանը՝ N 679 -Ն առ 25.05.2003 կ.կ.9,10,13 և հիգենիկ նորմեր N2-III -4.8-01-2006 պահանջներին:
38	Պոլիէթիլենային միացում DN25-25 պարուրակային /ամբողջական՝ էգ և որձ կցորդիչներով	հատ	100	Պոլիէթիլենային էգ և որձ կցորդիչներ /առանձնացող էգ և որձ մասերով/ DN25 պարուրակային, PN=10 մթն. /10 բար/, Համապատասխանի ՀՀ Կառավարության որոշմանը՝ N 679 -Ն առ 25.05.2003 կ.կ.9,10,13 և հիգենիկ նորմեր N2-III -4.8-01-2006 պահանջներին:
39	Պոլիէթիլենային միացում DN15-15 պարուրակային /ամբողջական՝ էգ և որձ կցորդիչներով	հատ	50	Պոլիէթիլենային էգ և որձ կցորդիչներ /առանձնացող էգ և որձ մասերով/ DN15-15 պարուրակային, PN=10 մթն. /10 բար/, Համապատասխանի ՀՀ Կառավարության որոշմանը՝ N 679 -Ն առ 25.05.2003 կ.կ.9,10,13 և հիգենիկ նորմեր N2-III -4.8-01-2006 պահանջներին:
40	Պոլիէթիլենային միացում DN32-25 պարուրակային /ամբողջական՝ էգ և որձ կցորդիչներով	հատ	50	Պոլիէթիլենային էգ և որձ կցորդիչներ /առանձնացող էգ և որձ մասերով/ DN32-25 պարուրակային, PN=10 մթն. /10 բար/, Համապատասխանի ՀՀ Կառավարության որոշմանը՝ N 679 -Ն առ 25.05.2003 կ.կ.9,10,13 և հիգենիկ նորմեր N2-III -4.8-01-2006 պահանջներին:
41	Պոլիէթիլենային միացում DN32-32 պարուրակային /ամբողջական՝ էգ և որձ կցորդիչներով	հատ	50	Պոլիէթիլենային էգ և որձ կցորդիչներ /առանձնացող էգ և որձ մասերով/ DN32-32 պարուրակային, PN=10 մթն. /10 բար/, Համապատասխանի ՀՀ Կառավարության որոշմանը՝ N 679 -Ն առ 25.05.2003 կ.կ.9,10,13 և հիգենիկ նորմեր N2-III -4.8-01-2006 պահանջներին:

[illegible]

53	Պոլիէթիլէնային միացում 110-110 պարուրակային /ամբողջական՝ էգ և որձ կցորդիչներով	հատ	50	Պոլիէթիլէնային էգ և որձ կցորդիչներ /առանձնացող մասերով/ DN110-110 պարուրակային, Համապատասխանի ՀՀ Կառավարության որոշմանը՝ N 679 -Ն առ 25.05.2003 կ.կ.9,10,13 և հիգենիկ նորմեր N2-III -4.8-01-2006 պահանջներին:
54	Պոլիէթիլէնային կցաշուրթ DN125	հատ	10	Պոլիէթիլէնային կցաշուրթ DN125, Համապատասխանի ՀՀ Կառավարության որոշմանը՝ N 679 -Ն առ 25.05.2003 կ.կ.9,10,13 և հիգենիկ նորմեր N2-III -4.8-01-2006 պահանջներին:
55	Պոլիէթիլէնային կցաշուրթ DN225	հատ	4	Պոլիէթիլէնային կցաշուրթ DN225, Համապատասխանի ՀՀ Կառավարության որոշմանը՝ N 679 -Ն առ 25.05.2003 կ.կ.9,10,13 և հիգենիկ նորմեր N2-III -4.8-01-2006 պահանջներին:
56	Պոլիէթիլէնային կցաշուրթ DN250	հատ	4	Պոլիէթիլէնային կցաշուրթ DN250, Համապատասխանի ՀՀ Կառավարության որոշմանը՝ N 679 -Ն առ 25.05.2003 կ.կ.9,10,13 և հիգենիկ նորմեր N2-III -4.8-01-2006 պահանջներին:
57	Պոլիէթիլէնային եռաբաշխիչ DN20 պարուրակային	հատ	50	Պոլիէթիլէնային եռաբաշխիչ DN20 պարուրակային
58	Պոլիէթիլէնային եռաբաշխիչ DN25 պարուրակային	հատ	50	Պոլիէթիլէնային եռաբաշխիչ DN25 պարուրակային
59	Պոլիէթիլէնային եռաբաշխիչ DN32 պարուրակային	հատ	50	Պոլիէթիլէնային եռաբաշխիչ DN32 պարուրակային
60	Պոլիէթիլէնային եռաբաշխիչ DN40 պարուրակային	հատ	50	Պոլիէթիլէնային եռաբաշխիչ DN40 պարուրակային
61	Պոլիէթիլէնային եռաբաշխիչ DN50 պարուրակային	հատ	50	Պոլիէթիլէնային եռաբաշխիչ DN50 պարուրակային
62	Պոլիէթիլէնային եռաբաշխիչ անցում DN 50-40-50 պարուրակային	հատ	20	50-40-50 մմ տրամագծերով պոլիէթիլէնային եռաբաշխիչ- անցում, PN 10 ճնշման տակ աշխատելու համար
63	Պոլիէթիլ. եռաբաշխիչ՝ ուղիղ 90-110-90 պարուրակային	հատ	8	Միացման եռաբաշխիչ HDPE խողովակների համար միացում պարուրի կամ դիսկի միջոցով. Պայմանական ճնշումը PN 10
64	Պոլիէթիլ. եռաբաշխիչ՝ ուղիղ 90-90-90 պարուրակային	հատ	8	Միացման եռաբաշխիչ HDPE խողովակների համար միացում պարուրի կամ դիսկի միջոցով. Պայմանական ճնշումը PN 10
65	Պոլիէթիլ. եռաբաշխիչ՝ ուղիղ 110-90-110 պարուրակային	հատ	8	Միացման եռաբաշխիչ HDPE խողովակների համար միացում պարուրի կամ դիսկի միջոցով. Պայմանական ճնշումը PN 10
66	Պոլիէթիլ.կցամաս եռաբաշխիչ՝անցումային 110-75-110	հատ	8	110-75-110 մմ տրամագծերով պոլիէթիլէնային եռաբաշխիչ- անցում, PN 10 ճնշման տակ աշխատելու համար
67	Պոլիէթիլ.կցամաս եռաբաշխիչ՝անցումային 110-63-110	հատ	10	110-63-110 մմ տրամագծերով պոլիէթիլէնային եռաբաշխիչ- անցում, PN 10 ճնշման տակ աշխատելու համար
68	Պոլիէթիլ.կցամաս եռաբաշխիչ՝անցումային 75-50-75	հատ	8	75-50-75 մմ տրամագծերով պոլիէթիլէնային եռաբաշխիչ- անցում, PN 10 ճնշման տակ աշխատելու համար
69	Պոլիէթիլ.կցամաս եռաբաշխիչ՝անցումային 75-63-75	հատ	10	75-63-75 մմ տրամագծերով պոլիէթիլէնային եռաբաշխիչ- անցում, PN 10 ճնշման տակ աշխատելու համար

[illegible]

88	Պոլիէթիլ.կցամաս եռաբաշխիչ՝ ուղիղ 50-50-50	հատ	30	50-50-50 մմ տրամագծերով պոլիէթիլենային կցամաս- եռաբաշխիչ ուղիղ, PN 10 ճնշման տակ աշխատելու համար
89	Պոլիէթիլենային անկյունակ 90աստիճ. DN20-20 պարուրակային	հատ	200	Պոլիէթիլենային անկյունակ 90աստիճ. DN20-20 պարուրակային
90	Պոլիէթիլենային անկյունակ 90աստիճ. DN32-32 պարուրակային	հատ	100	Պոլիէթիլենային անկյունակ 90աստիճ. DN32-32 պարուրակային
91	Պոլիէթիլենային անկյունակ 90աստիճ. DN40-40 պարուրակային	հատ	50	Պոլիէթիլենային անկյունակ 90աստիճ. DN40-40 պարուրակային
92	Պոլիէթիլենային անկյունակ 90աստիճ. DN50-50 պարուրակային	հատ	30	Պոլիէթիլենային անկյունակ 90աստիճ. DN50-50 պարուրակային
93	Պոլիէթիլենային անկյունակ 90աստիճ. DN63-63 պարուրակային	հատ	30	Պոլիէթիլենային անկյունակ 90աստիճ. DN63-63 պարուրակային
94	Պոլիէթիլենային անկյունակ 90աստիճ. DN75-75 պարուրակային	հատ	20	Պոլիէթիլենային անկյունակ 90աստիճ. DN75-75 պարուրակային
95	Պոլիէթիլենային անկյունակ 90աստ. DN90-90 պարուրակային	հատ	20	Պոլիէթիլենային անկյունակ 90աստ. DN90-90 պարուրակային
96	Պոլիէթիլենային անկյունակ 90աստ. DN110-110 պարուրակային	հատ	10	Պոլիէթիլենային անկյունակ 90աստ. DN110-110 պարուրակային
97	Պոլիէթիլենային անկյունակ/կցամաս 90 DN110 պարուրակային	հատ	10	Պոլիէթիլենային անկյունակ/կցամաս 90 DN110 պարուրակային
98	Պոլիէթիլենային անցում DN40- 50 պարուրակային	հատ	30	Անցումներ պոլիէթիլենից՝ DN40-50 պարուրակային
99	Պոլիէթիլենային անցում DN50- 63 պարուրակային	հատ	100	Անցումներ պոլիէթիլենից՝ DN50-63 պարուրակային
100	Պոլիէթիլենային անցում DN63- 75 պարուրակային	հատ	50	Անցումներ պոլիէթիլենից՝ DN63-75 պարուրակային
101	Պոլիէթիլենային անցում DN110- 90 պարուրակային	հատ	10	Անցումներ պոլիէթիլենից՝ DN110-90 պարուրակային
102	Պոլիէթիլենային անցում անկյունակ DN50-90 զոդման	հատ	10	Անցումներ պոլիէթիլենից՝ DN50-90 զոդման
103	Պոլիէթիլենային անցում 110 DN 63 պարուրակային	հատ	10	Անցումներ պոլիէթիլենից՝ DN110-63 պարուրակային
104	Պոլիէթիլենային անցում 110 DN 75 պարուրակային	հատ	10	Անցումներ պոլիէթիլենից՝ DN110-75 պարուրակային
105	Պոլիէթիլենային անցում 90 DN 75 պարուրակային	հատ	40	Անցումներ պոլիէթիլենից՝ DN90-75 պարուրակային
106	Պոլիէթիլենային անցում DN 90- 63 պարուրակային	հատ	10	Անցումներ պոլիէթիլենից՝ DN90-63 պարուրակային
107	Պոլիէթիլենային անցում DN 90- 50 պարուրակային	հատ	10	Անցումներ պոլիէթիլենից՝ DN90-50 պարուրակային

[illegible]

132	Պոլիէթիլենային գոտի միացում DN110-20	հատ	50	Պոլիէթիլենային գոտի միացումներ 10 մթն ճնշման տակ աշխատելու համար
133	Պոլիէթիլենային գոտի միացում DN110-25	հատ	50	Պոլիէթիլենային գոտի միացումներ 10 մթն ճնշման տակ աշխատելու համար
134	Պոլիէթիլենային գոտի միացում DN110-32	հատ	50	Պոլիէթիլենային գոտի միացումներ 10 մթն ճնշման տակ աշխատելու համար
135	Պոլիէթիլենային գոտի միացում DN110-40	հատ	50	Պոլիէթիլենային գոտի միացումներ 10 մթն ճնշման տակ աշխատելու համար
136	Պոլիէթիլենային գոտի միացում DN110-50	հատ	30	Պոլիէթիլենային գոտի միացումներ 10 մթն ճնշման տակ աշխատելու համար
137	Պոլիէթիլենային գոտի միացում DN110-75	հատ	20	Պոլիէթիլենային գոտի միացումներ 10 մթն ճնշման տակ աշխատելու համար
138	Պոլիէթիլենային միացում DN 63-63 պարուրակային /էգ, որձ/	հատ	20	Պոլիէթիլենային միացում DN 63-63 պարուրակային /էգ, որձ/
139	Պոլիէթիլենային միացում DN 50-50 պարուրակային /էգ, որձ/	հատ	30	Պոլիէթիլենային միացում DN 50-50 պարուրակային /էգ, որձ/
140	Պոլիէթիլենային միացում DN 40-40 պարուրակային /էգ, որձ/	հատ	30	Պոլիէթիլենային միացում DN 40-40 պարուրակային /էգ, որձ/
141	Պոլիէթիլենային միացում DN 32-32 պարուրակային /էգ, որձ/	հատ	30	Պոլիէթիլենային միացում DN 32-32 պարուրակային /էգ, որձ/
142	Պոլիէթիլենային միացում DN 25-25 պարուրակային /էգ, որձ/	հատ	30	Պոլիէթիլենային միացում DN 25-25 պարուրակային /էգ, որձ/
143	Պոլիէթիլենային միացում DN 20-20 պարուրակային /էգ, որձ/	հատ	50	Պոլիէթիլենային միացում DN 20-20 պարուրակային /էգ, որձ/
144	Պոլիվինիլքլորիդային անկյունակ/միացում 90 DN110	հատ	10	Պոլիվինիլքլորիդային անկյունակ/միացում 90 DN110
145	Մետաղապլաստե խողովակ DN 16	գծ.մ	30	Մետաղապլաստե խողովակ 16*2.2
146	Մետաղապլաստե խողովակ DN 25	գծ.մ	30	Մետաղապլաստե խողովակ 25*2.4
147	Մետաղապլաստե եռաբաշխիչ DN16	հատ	10	Մետաղապլաստե եռաբաշխիչ DN16
148	Ռետինե կորդավոր խողովակներ DN32	գծ.մ	15	Ռետինե կորդավոր խողովակներ DN32
149	Ռետինե կորդավոր խողովակներ DN50	գծ.մ	15	Ռետինե կորդավոր խողովակներ DN50
150	Ռետինե կորդավոր խողովակներ DN75	գծ.մ	15	Ռետինե կորդավոր խողովակներ DN75
151	Ռետինե կորդավոր խողովակներ DN100	գծ.մ	15	Ռետինե կորդավոր խողովակներ DN100
152	Ռետինե ոչ կորդավոր խողովակներ DN16	գծ.մ	60	Ռետինե ոչ կորդավոր խողովակներ DN16
153	Ռետինե ոչ կորդավոր խողովակներ DN25	գծ.մ	30	Ռետինե ոչ կորդավոր խողովակներ DN25
154	Ռետինե ոչ կորդավոր խողովակներ DN45	գծ.մ	10	Ռետինե ոչ կորդավոր խողովակներ DN45
155	GF PE էլ.կցորդիչ /մուֆտ/ d=110	հատ	2	Պոլիէթիլենային խողովակներ էլ. զոդման նպատակով օգտագործվող կցորդիչ /ֆիտինգ/ d=110

156	GF PE Էլ.կցորդիչ /մուֆտ/ d=125	հատ	2	Պոլիէթիլենային խողովակներ Էլ. զողման նպատակով օգտագործվող կցորդիչ /ֆիտինգ/ d=125
157	GF PE Էլ.կցորդիչ /մուֆտ/ d=160	հատ	2	Պոլիէթիլենային խողովակներ Էլ. զողման նպատակով օգտագործվող կցորդիչ /ֆիտինգ/ d=160
158	GF PE Էլ.կցորդիչ /մուֆտ/ d=200	հատ	2	Պոլիէթիլենային խողովակներ Էլ. զողման նպատակով օգտագործվող կցորդիչ /ֆիտինգ/ d=200
159	GF PE Էլ.կցորդիչ /մուֆտ/ d=280	հատ	2	Պոլիէթիլենային խողովակներ Էլ. զողման նպատակով օգտագործվող կցորդիչ /ֆիտինգ/ d=280
160	GF PE Էլ.կցորդիչ /մուֆտ/ d=315	հատ	2	Պոլիէթիլենային խողովակներ Էլ. զողման նպատակով օգտագործվող կցորդիչ /ֆիտինգ/ d=315
161	GF PE Էլ.կցորդիչ /մուֆտ/ d=400	հատ	2	Պոլիէթիլենային խողովակներ Էլ. զողման նպատակով օգտագործվող կցորդիչ /ֆիտինգ/ d=400
162	PE DN=110 ճկուն միացում	հատ	5	PE DN=110 ճկուն միացում
163	PE DN=125 ճկուն միացում	հատ	5	PE DN=125 ճկուն միացում
164	PE DN=160 ճկուն միացում	հատ	5	PE DN=160 ճկուն միացում
165	Սողնակային փական DN 15	հատ	1,000	Սողնակային փական պողպատից DN 15
166	Սողնակային փական DN 20	հատ	1,000	Սողնակային փական պողպատից DN 20
167	Սողնակային փական DN 25	հատ	150	Սողնակային փական պողպատից DN 25
168	Սողնակային փական DN 32	հատ	100	Սողնակային փական պողպատից DN 32
169	Սողնակային փական DN 40	հատ	50	Սողնակային փական պողպատից DN 40
170	Սողնակային փական DN 50	հատ	50	Սողնակային փական պողպատից DN 50
171	Սողնակային փական DN 63	հատ	10	Սողնակային փական պողպատից DN 63
172	Սողնակային փական DN 400	հատ	2	Սողնակային փական պողպատից DN 400, Ռուսական արտադրության կամ համարժեք
173	Գնդիկային փական DN 15	հատ	100	Պողպատե գնդիկավոր փական DN 15
174	Գնդիկային փական DN 20	հատ	100	Պողպատե գնդիկավոր փական DN 20, 10 բար
175	Գնդիկային փական DN 25	հատ	20	Պողպատե գնդիկավոր փական DN 25, 10 բար
176	Գնդիկային փական DN 32	հատ	30	Պողպատե գնդիկավոր փական DN 32
177	Գնդիկային փական DN 50	հատ	30	Պողպատե գնդիկավոր փական DN 50
178	Հետադարձ փական DN 15	հատ	10	Հետադարձ փական DN 15
179	Հետադարձ փական DN 80	հատ	2	Հետադարձ փական DN 80
180	Օդահեռ փական DN 15	հատ	20	Օդահեռ փական DN 15
181	Օդահեռ փական DN 50	հատ	10	Օդահեռ փական DN 50
182	Օդահեռ փական DN 80	հատ	10	Օդահեռ փական DN 80
183	Օդահեռ փական DN 100	հատ	5	Օդահեռ փական DN 100
184	Պողպատի զողման էլեկտրոդ հաստատուն հոսանքի DN3	կգ	10	3մ տրամագծերով հալվող էլեկտրոդներ՝ փոփոխական հոսանքով աշխատանքի համար աղեղային եռակցման համար համապատասխան ԳՕՍՍ 2246—70
185	Պողպատի զողման էլեկտրոդ հաստատուն հոսանքի DN4	կգ	1200	4մ տրամագծերով հալվող էլեկտրոդներ՝ փոփոխական հոսանքով աշխատանքի համար աղեղային եռակցման համար համապատասխան ԳՕՍՍ 2246—70
186	Պողպատե լար DN2	կգ	100	Պողպատե լար DN2

187	Պողպատե լար DN4	կգ	300	Պողպատե լար DN4
188	Ջերմամեկուսիչ ապակեբամբակ ֆոլգայապատ	հատ	5	Ապակեբամբակ 1000*10
189	Ջերմամեկուսիչ ծածկոց DN20-50մմ	զծ.մ	200	Ջերմամեկուսիչ ծածկոց խողովակների համար /պոլիպրոպիլեն/ DN20-50մմ
190	Ռետինե մեկուսիչ թերթ 4-5մմ	կգ	130	Ռետինե մեկուսիչ թերթ 4-5մմ հաստությամբ
191	Չորսու HB50-50	զծ.մ	1570	Փայտի սեպ /չորսու/ HB50-50
192	Չներծծված պարաններ	զծ.մ	700	Պարան վուշե 16-18 մմ
193	Ներծծված պարաններ	կգ	20	Յուղապատված պարան ջրագծերի համար
194	Մեխ	կգ	10	Մեխ շինարարական , 60մմ-ից 120մմ չափերի
195	Պակլի	հատ	1,000	Պակլի ֆուլ մեծ
196	Հեղուկ Մանեկ DN8մմ	կգ	10	Պողպատյա հեղուկ և մանեկ M8, երկարությունը՝ 80-120մմ, վեցանիստ գլխիկով ԳՕՍՍ 7798-70
197	Հեղուկ Մանեկ DN10մմ	կգ	25	Պողպատյա հեղուկ և մանեկ M10, երկարությունը՝ 80-120մմ, վեցանիստ գլխիկով ԳՕՍՍ 7798-70
198	Հեղուկ Մանեկ DN12մմ	կգ	200	Պողպատյա հեղուկ և մանեկ M12, երկարությունը՝ 80-120մմ, վեցանիստ գլխիկով ԳՕՍՍ 7798-70
199	Հեղուկ Մանեկ DN14մմ	կգ	200	Պողպատյա հեղուկ և մանեկ M14, երկարությունը՝ 80-120մմ, վեցանիստ գլխիկով ԳՕՍՍ 7798-70
200	Հեղուկ Մանեկ DN16մմ	կգ	400	Պողպատյա հեղուկ և մանեկ M16, երկարությունը՝ 80-120մմ, վեցանիստ գլխիկով ԳՕՍՍ 7798-70
201	Կարբիդ	կգ	500	Կալցիումի կարբիդ՝ CaC ₂ ՝ նախատեսված ագետիլենի ստացման համար: Կտորների մեծությունը՝ 50մմ և ավելի, Փաթեթավորումը 100 կգ-ոց տարաներով: Տեխնիկական այլ բնութագրերը՝ համապատասխան ԳՕՍՍ 1460-81
202	Ցեմենտ	կգ	7000	Ցեմենտ պարկերով Մ 400 մարկայի, չափածրարված 40 կգ-ոց պարկերով
203	Ավազ	խոր.մ	50	Շինարարական ավազ, մաղած
204	Ծեփամածիկ	կգ	50	Գիպսակավիճային հիմքով պոլիմերային և ցելյուլոզային հավելումներով սպիտակ խառնուրդ: Այդ հավելանյութերի հաշվին ապահովվում է բարձր կաշողականություն և հեշտ աշխատանք: Նախատեսված է շինարարական ներքին աշխատանքներում պատերի և առաստաղների (բետոն, գիպս, ծեփ, փայտ և այլ ծածկույթների ճաքերի, կարերի, անցքերի հարթացման համար հետագա ներկման աշխատանքներից առաջ):
205	Փրփրապլաստ	հատ	10	Պենոպլաստ 4 սմ 1*2 մ
206	Ացետոնային ներկ /0.75լ/	հատ	50	Ացետոնային ներկ

207	Յուղային հիմքով ներկ	կգ	50	Կախված բաղադրության մեջ մտնող թաղանթագոյացնող նյութից յուղաներկերը բաժանվում են. ցինկի շպար, լիթոպոնային շպար, գունավոր ներկեր, երկաթի սուսրի, մումիայի, օքրա: Նախատեսված են շենքերի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների (բացառությամբ հատակի ներկման), ինչպես նաև մետաղյա և փայտյա իրերի ներկման համար: Յուղաներկերում թաղանթագոյացնող նյութի զանգվածային մասը պետք է լինի 20%-ից մինչև 34%, պայմանական մածուցիկությունը՝ ըստ B 3- 4 մածուցիկաչափի (20°0,5) °C, 65-160 վ, տարբեր երանգների: Յուղաներկերում թաղանթագոյացնող նյութի զանգվածային մասը պետք է լինի 20%-ից մինչև 34%, պայմանական մածուցիկությունը՝ ըստ B 3- 4 մածուցիկաչափի (20°0,5) °C, 65-160 վ, տարբեր երանգների /սպիտակ, սև, կարմիր, կապույտ, դեղին/:
208	Լուծիչ	լ	20	Նիտրոցելուլոզային հիմքով,լուծվելու բարձր ունակությամբ լուծիչ՝ նախատեսված որպես հավելում՝ ցելուլոզային հիմքով ներկերի համար՝ համապատասխան ԳՕՍՍ 18188: Նախատեսված է լաք, ներկ, էմալ, նախաներկ, ծեփամածիկ բացելու համար, նաև՝ յուղային, ակրիլային, նիտրո, էպեքսիդային, պենտաֆտանելային հիմքերի համար: Օժտված է նաև մաքրող հատկությամբ, վերացնելով յուղ, ձեթ, ներկալաքային նյութերի հետքերը:
209	Ներկ փչովի	հատ	30	Տարբեր երանգների փչովի ներկ /սպիտակ, սև, կարմիր, կապույտ, դեղին, կանաչ/:
